ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/22

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ քննելով «Խաչհար» ՍՊԸ-ի 10.07.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչհար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչհար» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 10.07.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/4Շ» ծածկագրով բաց մրցութային ընթացակարգը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, գնահատող հանձնաժողովը հայտերը պետք է գնահատի համաձայն հրավերի պահանջների, ինչը հանձնաժողովի կողմից չի կատարվել:

Այսպես, «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես, վճարման պահանջագրում նշված շահառուի հաշվեհամարը սխալ է:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը՝ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված պահանջները»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին առաջին տեղը զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչելու մասին հանձնաժողովի համապատասխան որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Խաչհար» ՍՊԸ-ի փոխտնօրեն Միհրան Զաքարյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 25.07.2017թ. թիվ 08/15.3/13838-17 գրությամբ «Խաչհար» ՍՊԸ-ի կողմից 10.07.2017թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով բողոքի առարկան՝ տեղեկացնում եմ, որ «Նաիրիի ՃՇՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտի վճարման պահանջագրում շահառուի հաշվի համարը սխալ է նշված, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից չի նկատվել գնահատման ընթացքում: Ցանկանում եմ ավելացնել նաև, որ հայտի ապահովման համար շահառուի հաշվի համարն է 900005000741, իսկ պայմանագրի ապահովմանը՝ 900005000758»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի ներկայացուցիչներ Գուրգեն Թադևոսյանը և Կարեն Գասպարյանը:

<u>3. ԳԲԽ-ԷՍ-2017/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Խաչհար» ՍՊԸ-ի 10.07.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 25.07.2017թ. թիվ 08/15.3/13838-17

գրությունը, «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/4Շ» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/4Շ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.06.2017թ. նիստի թիվ 4 և 29.06.2017թ. թիվ 5 արձանագրությունները, ինչպես նաև 30.06.2017թ. թիվ 2 որոշմամբ հրապարակված՝ պայմանագիր կնքելու մասին որոշումը, «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում ներառված վճարման պահանջագրի պատճենը, Պատվիրատուի ներկայացուցիչների դիրքորոշումները և կարծիքները.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Հ-3 Երևան-Գառնի-Գեղարդ հանրապետական նշանակության ավտոճանապարհի (Ողջաբերդ գյուղի տարածք) Կմ0+000-Կմ2+000 հատվածի սողանքային հատվածների անցանելիության ապահովման, Հ-4, Երևան-Եղվարդ-Արագյուղ-Հարթավան-Մ-3 հանրապետական նշանակության ավտոճանապարհի Կմ28+000 - Կմ33+120 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/4Շ» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին՝ ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «Խաչհար» ՍՊԸ-ն և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Հանձնաժողովը 22.06.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշում է ընդունել «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին ճանաչել Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 29.06.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ՝ նույն չափաբաժնի մասով՝ որպես ընտրված մասնակից:

«Խաչհար» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ մասնավորապես, վերջինիս կողմից հայտով ներկայացված վճարման պահանջագրում նշված շահառուի հաշվեհամարը սխալ է նշվել:

Հրավերի N 9 հավելված հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրին (մասնակցության հայտի ապահովում) կից ներկայացվող վճարման պահանջագրի ծանոթությամբ սահմանվել է, որ վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն նույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: Նշված կարգի համաձայն՝ վճարման պահանջագրի 11-րդ կետով սահմանված «շահառուի հաշվի համարը» վավերապայմանի առկայությունը

փաստաթղթում պարտադիր է, որը լրացվում է վճարողի կողմից, ընդ որում, վավերապայմանը հանդիսանում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները:

«Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի ապահովմանը կից վճարման պահանջագրի պարտադիր լրացման ենթակա «շահառուի հաշվի համարը» վավերապայմանի դիմաց՝ որպես շահառուի հաշվի համար, նշվել 900005000758 հաշվի համարը:

Պատվիրատուն 25.07.2017թ. թիվ 08/15.3/13838-17 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ հայտի ապահովման համար նախատեսված շահառուի հաշվի համարը հանդիսանում է 900005000741 հաշվի համարը, իսկ պայմանագրի ապահովմանը՝ 900005000758 հաշվի համարը:

Բողոքի քննության նպատակով 20.07.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ, Պատվիրատուի ներկայացուցիչները ընդունեց այն փաստը, որ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման ժամանակ Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել վրիպում, ինչի արդյունքում «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի հայտը հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Խորհուրդն արձանագրում է, որ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից վճարման պահանջագրում լրացված շահառուի հաշվի համարը սխալ է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչհար» ՍՊԸ-ի կողմից 10.07.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել՝ Հանձնաժողովի կողմից 22.06.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու, 29.06.2017թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին ընդունած որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**